պետն։ Օրս մեր ժամու Եղիայի կինն մեռաւ ի տղաբերքն՝ քոյր Ղազարին։ Եւ զԽանձին ըմբռնեալ բըռնաւորացն և ի նաւ եդեալ անցանել յայն կոյս և ի նաւին բազում չարչարանս տվեալ նորա վասն Հասան աղային և տարեալ ի բանտ եդին. և զայլսն ի Հայոց ըմբռնեալ և տարեալ ի տուն Ալի աղային, յոյժ դան հարեալ զնոսա թէ Ասացէք զՀասան աղան ո՛ւր իցէ. և տուն ոչ թողին ի Ղալաթա թէ ոչ որոնեցին։

Իսկ Բշի օրս (3 Մարտ) գային զՀասան աղան ի տունս տաճկի հալաճի միոյ և տարան առ զայմախամն և նա բազում հարց և փորձ արարեալ և նա տվեալ զպատասխանին. բայց եդ զնա ի բանտի ի սիլիհտար աղասուն տանն։ Յաւուրս զսուպաշին մանզուլ արարին, զմիականի չաւուշ մի եղև։

Ի գիշերիս յայս որ Դշի (4 Մարտ) լուսանայր, ըզյէնկիչէրոց քեհեայէկն խեղդամահ արարեալ և տարեալ ի տուն մի կախեալ և համբաւեցին թէ Զիւրովի զինքն կախեալ, քանզի և սա կորստական էր, և աւուրս տարեալ ձգեցին ի յԱթմէյտանին ի տեսս ռամկաց ամենայն քաղաքիս, և յետ պահու ինչ բարձեալ զնա իւրքն և ընդ հողով արկին։

Յայսմ աւուր ժողովեցան արք քաղաքիս և իշխանք եւ ասացին թէ Ահա՛ կու գայ վէզիրն եւ մեք զի՛նչ ասասցուք, եթէ զնասցէ մատնիչն և ասասցէ սակս Առաջնորդին թէ Խէթիշէրիֆ ունին և սեաղլուխ կու պահեն։ Խորհուրդ արարեալ և գրեցին թէ Վասն Աստուծոյ եկ և զնա՛, ահա յառաջագոյն զգուշացի՛ր, և թէ ի բռնաւորէն մի վնաս գայ՝ մեք անպարտ եմք. եկ և զնա՛ վասն Աստուծոյ, որ եկեղեցեացն ևս չհասանի մի վնաս։ Եւ կնքեցեն զթուղթն Զ աթոռակալք եւ ուղարկեցին ի յՈւսկիւտարն. եւ նա տվեալ պատասխանի թէ Զեմ երթար մինչև զիմ պարտս տան՝ Զձ ղուռուշ։ Եւ կրկին սոքա ժողով արարեալ ի Վալ-